Արձանագրություն N 22/1-3

«ՔԵՆԴԼ–ԳՀԾՁԲ-22/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի

հայտերի գնահատման նիստի

ք. Երևան 26 նոյեմբերի 2021թ. Ժամը 11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ (ԳԱՊ)	Մ. Գյուլումյան,
Գնահատող անդամ (ԳԱ)՝	Ա. Պետրոսյան,
Բացող անդամներ (ԲԱ)՝	Ա. Վարդանյան, Ստ. Թաթիկյան,
Հանձնաժողովի քարտուղար (ՄՀմ)՝	Ա. Բաղրամյան

1. **Գնահատող հանձնաժողովի 24.11.2021թ նիստի թիվ 22/1-2 որոշման 1-ին կետի վերաբերյալ**

(Մ. Գյուլումյան)

«Քինգ Մարշալ» ՍՊԸ-ն ներկայացրել է Հրավերի II մասի հավելված 1.2-տեսքով պահանջված հայտարարագիրը:

Հանձնաժողովը «Քինգ Մարշալ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը գնահատում է ԲԱՎԱՐԱՐ:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. **Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների վերաբերյալ**

(Մ. Գյուլումյան)

Մրցույթի համար նախատեսված նախահաշվային արժեքը՝ 4,800,000 դրամ

Չափա բաժնի համարը	Ծառայության անվանումը	Մասնակցի առաջարկած գինը, ՀՀ դրամ					
		Մասնակիցների անվանումը					
1	Անվտանգության ապահովման (Պահնորդական) ծառայություններ	«Լիոն Սեքուրիթի Սերվիս» ՍՊԸ	«ԷԼ-ԷՆ ԳԱՐԴ ՍԻՍՏԵՄՍ» ՍՊԸ	«ԿՈՄԱՆԴԻՐ ՍԵՔՅՈՒՐԻԹԻ» ՍՊԸ	«ՏՐԱՆՍ ՍՖԵՐ» ՍՊԸ	«Ռեդ Նեթ» ՍՊԸ	«Քինգ Մարշալ» ՍՊԸ
	առանց ԱԱՀ	3 799 000	6 000 000	6 600 000	6 000 000	3 300 000	4 500 000
	ԱԱՀ-ով	4 558 800	6 000 000	7 920 000	6 000 000	3 300 000	5 400 000

3. **Հանձնաժողովի որոշման վերաբերյալ**

(Մ. Գյուլումյան)

Տվյալ գնման ընթացակարգը իրականացվում է Գնումների մասին ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ուստի ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու համար անհրաժեշտ է **առաջարկված գների նվազեցման նպատակով** հանձնաժողովի հաջորդ նիստում **բոլոր մասնակիցների** (կամ համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչների) **հետ վարել միաժամանակյա բանակցություններ.** ընդ որում՝ մինչև բանակցությունների համար նախատեսված վերջնաժամկետի ավարտը **մասնակիցը կարող է վերանայել իր գնային առաջարկը:** (Բանակցությունների վարման կարգի ամբողջական նկարագրությունը՝ Հրավերի 1-ին մասի 8.7 հոդվածում):

Հանձնաժողովը որոշեց՝ **Որոշում N 22/1-3**

1. Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 29.11.2021թ.-ին ժ. 14:00-ին:

2. ՔԵՆԴԼ-ԳՀԾՁԲ-22/1 ընթացակարգի բոլոր մասնակիցներին ս.թ. նոյեմբերի 29-ին, ժ. 14:00-ին հրավիրել ՔԵՆԴԼ ՍՀԻ հիմնադրամ՝ ք. Երևան, Աճառյան 31 հասցեի վարչական շենքի 207 սենյակ, միաժամանակյա բանակցությունների՝ ձեռք բերվող «Անվտանգության ապահովման (Պահնորդական) ծառայությունների» մրցույթի **<u>ընտրված մասնակցի որոշման</u>** նպատակով:
3. Բանակցությունների համար հատկացվում է մինչև 1 ժամ ժամանակ; Վերջնաժամկետը լրանալու պահին նվազագույն գին առաջարկած մասնակիցը ճանաչվում է Ընտրված մասնակից:
4. Ընտրված մասնակցի հետ կնքվող պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքներն ու պարտականություններն ուժի մեջ են մտնում ֆինանսական միջոցներ նախատեսվելու և դրա հիման վրա կողմերի միջև **համաձայնագիր կնքելու** դեպքում:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Միքայել Գյուլումյան

Անդամներ՝ _____ Արմեն Պետրոսյան

_____ Աշոտ Վարդանյան

_____ Ստեփան Թաթիկյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Արծրուն Բաղրամյան